ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում և կառավարում

2020-2022

ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

ԵՎ 2020

ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

1. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՆԱԽՈՐԴՈՂ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԱՏՎԱԾՈՒՄ

ՓՄՁ ոլորտի վերջին տարիների զարգացման միտումները պայմանավորված են ՓՄՁ ոլորտի զարգացման և պետական աջակցության ծրագրերի (գործարար ծրագրերի ու նախաձեռնությունների) արդյունավետ և նպատակային իրականացմամբ, ինչպես նաև ՓՄՁ ոլորտի զարգացմանը նպատակաուղղված համապատասխան ենթակառուցվածքների պահպանմամբ և ամրապնդմամբ:

Այս համատեքստում «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի (Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ) մարզային մասնաճյուղերի ցանցի ձևավորումը (2003-2005թթ.) հնարավորություն ընձեռեց Հայաստանի ողջ տարածքում իրականացնել փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման տարածաշրջանային, մարզային ու համայնքային ծրագրեր՝ հաշվի առնելով ՀՀ տարածաշրջանային զարգացման գերակայությունները, առանձին բնակավայրերի առանձնահատկություններն ու ներուժը:

2001 թվականից սկսած Հայաստանի Հանրապետությունում իրականացվում են ՓՄՁ պետական աջակցության տարեկան ծրագրեր, որոնց ֆինանսավորումը համաձայն «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի պահանջների ապահովվում է ՀՀ պետական բյուջեից՝ առանձին տողով:

Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության 2016, 2017 և 2018 թվականների ծրագրերի իրականացումն ապահովվել է ինչպես ՀՀ 2016, 2017 և 2018 թվականների պետական բյուջեների, այնպես էլ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի միավորված դրամագլխի ու այլ եկամուտների և միջազգային ու օտարերկրյա դոնոր կազմակերպությունների միջոցների հաշվին: Մասնավորապես՝ փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության 2016, 2017 և 2018 թվականների ծրագրերի իրականացման համար ՀՀ 2016, 2017 և 2018 թվականների պետական բյուջեներից հատկացվել է համապատասխանաբար 152,600.0 հազ. դրամ, 152,600.0 հազ. դրամ և 152,600.0 հազ. դրամ, որի հաշվին սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական և տեխնիկական աջակցության ուղղություններով աջակցություն է ցուցաբերվել համապատասխանաբար 4300, 4700 և 4000 ՓՄՁ սուբյեկտի: Բացի այդ, վերոհիշյալ ծրագրերի իրականացման շրջանակներում միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների ու տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության շրջանակներում ներգրավվել է լրացուցիչ ֆինանսական միջոցներ:

Ընդհանուր առմամբ 2002-2018 թթ. ընկած ժամանակահատվածում ՓՄՁ պետական աջակցության տարեկան ծրագրերի իրականացման նպատակով ՀՀ պետական բյուջեից հատկացվել է շուրջ 3,962,083.7 հազ. դրամ, որի հաշվին ֆինանսական և տեխնիկական աջակցության ուղղություններով աջակցություն է ցուցաբերվել շուրջ 109 000 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին:

Ստորև ներկայացվում է վերջին երեք տարիների (2016–2018թթ.) ՓՄՁ ոլորտի զարգացման միտումները ինչպես ֆիզիկական (ոչ ֆինանսական), այնպես էլ ֆինանսական ցուցանիշների կտրվածքով.

2016 թվականի ընթացքում ՓՄՁ ոլորտի զարգացման միտումները պայմանավորվել են ՓՄՁ ոլորտի զարգացման և պետական աջակցության հետևյալ ծրագրերի (ծրագրային միջոցառումների) իրականացմամբ.

1. «ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ենթակառուցվածքների պահպանում և ամրապնդում»

2. «ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար ուսուցողական աջակցություն (կարողությունների զարգացում) ծրագրային միջոցառման ուղղությամբ հաշվետու ժամանակահատվածում *սկսնակ գործարարներին ձեռներեցությանն աջակցության* մասով աջակցություն է

տրամադրվել 152 սկսնակ գործարարի, *ուսուցողական աջակցության* մասով՝ 126 ՓՄՁ սուբյեկտների:

3. «ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն ծրագրային միջոցառման ուղղությամբ հաշվետու ժամանակահատվածում շուրջ 4300 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին (այդ թվում՝ 64 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտների Հաշվապահական կենտրոնում գործող կազմակերպությունների մասնագետների կողմից) անհատական, խմբային հանդիպումների և հեռահաղորդակցության միջոցներով տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն է տրամադրվել 8417 անգամ:

4. *«ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն»* ծրագրային միջոցառման ուղղությամբ հաշվետու ժամանակահատվածում աջակցություն են ստացել 18 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներ:

5. «Տեղական տնտեսական զարգացում և ոլորտային բիզնեսներին աջակցություն» ծրագրային միջոցառման ուղղությամբ հաշվետու ժամանակահատվածում համայնքների տնտեսական ներուժի բացահայտման ուղղությամբ «Մրցակցային առավելությունների մասնակցային գնահատում» է իրականացվել 5 համայնքային խմբերում (կլաստեր), որտեղ ընդգրկվել են 19 համայնքներ: Բացահայտվել են տնտեսական և ենթակառուցվածքային 82 նախաձեռնություններ:

Իրականացվել է 10 ենթակառուցվածքային ծրագիր, 2017 թվականի իրականացման համար հաստատվել է ենթակառուցվածքային 5 ծրագիր: «Մրցակցային առավելությունների մասնակցային գնահատում» է իրականացվել 5 համայնքային խմբերում (կլաստեր), բացահայտվել են տնտեսական և ենթակառուցվածքային 82 նախաձեռնություններ: Դրամաշնորհ են ստացել 10 ձեռնարկատերեր: Մշակվել և տպագրվել են 1 տեխնոլոգիական և 2 գործարար ուղեցույցներ:

6. «Կանանց ձեռներեցությանն աջակցություն» ծրագրային միջոցառման ուղղությամբ՝ Ասիական Զարգացման Բանկի տեխնիկական աջակցության շրջանակներում իրականացվող «Կանանց ձեռներեցության զարգացում» ծրագրի շրջանակներում մեկնարկել է «Գործարար կանանց ուղղորդում» ծրագիրը: Կազմակերպվել է մենթորության երկօրյա դասընթաց/խորհրդատվություն Երևանում և ՀՀ մարզերում գործող 16 կին ձեռներեցների համար, որոնցից 7-ը՝ փորձառու գործարար կանայք էին, իսկ մյուս 9-ը՝ սկսնակներ:

Կայացել է նաև «Լավագույն կին գործարար» ՀՀ վարչապետի 2016 թվականի մրցանակաբաշխության հանդիսավոր արարողությունը: ՀՀ փոխվարչապետը պատվոգրեր է հանձնել «Լավագույն կին գործարար» մրցանակաբաշխության 6 անվանակարգերով հաղթած 12 կին-գործարարների:

7. «Տեղական արտադրանքի արտահանմանն աջակցություն և ՓՄՁ սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովում» ծրագրային միջոցառման ուղղությամբ հաշվետու ժամանակահատվածում *«Հայաստանում ձեռնարկությունների եվրոպական ցանցի հաղորդակցման կենտրոնի գործունեության ապահովում» ծրագրային միջոցառման ուղղությամբ* Հայաստանում ձեռնարկությունների եվրոպական ցանցի (ՁԵՑ) գործունեության շրջանակներում աջակցություն է տրամադրվել 190 ՓՄՁ սուբյեկտների: Մշակվել և գործարարների շրջանակներում է տարածվել Հայաստանում ՁԵՑ-ի հաղորդակցման կենտրոնի էլեկտրոնային նորությունների ամսական տեղեկաթերթի 12 նոր համար, ինչպես նաև «Միջազգային գործարար համագործակցության միջոցառումներ» խորագրով տեղեկաթերթի 4 համար, որն իր մեջ ներառում է տեղեկատվություն արտերկրներում տեղի ունեցող միջոցառումների մասին:

8. «Միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ ՓՄՁ-ի զարգացման համատեղ (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրերի մշակում և իրականացում» ծրագրային ուղղությունների ընդլայնման և լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների ներգրավման նպատակով 2016 թվականի հաշվետու ժամանակահատվածում

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը շարունակել է համատեղ ծրագրեր մշակել և իրականացնել մի շարք միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների հետ: Մասնավորապես՝ ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» ծրագիր, «Ձեռնարկատիրական աշխատանք Հայաստանի երիտասարդության համար» ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO)/Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի համատեղ ծրագիր, «Տեղական արտադրանքի զարգացում և տեղական ապրանքանիշերի առաջմղում Հայաստանում – փուլ - 2» Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ/ՃՄՀԳ (Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալություն) համատեղ ծրագիր, ԵՄ տարածքային զարգացման պիլոտային դրամաշնորհային ծրագիր, «ERASMUS երիտասարդ ձեռնարկատերերի համար» ծրագիր:

9. Աջակցության այլ ծրագրեր

Գյուղատնտեսական տեխնիկայի և հարակից սարքավորումների ձեռքբերմանն աջակցության ծրագիր՝ հաշվետու ժամանակահատվածում վաճառվել է ռուսական արտադրության «Նիվա էֆֆեկտ» մակնիշի 1 հացահատիկահավաք կոմբայն, 2 հատ ճշգրիտ ցանքի սերմնացան ՍՊՁ-6LS, 2 հատ փխրեցուցիչ:

ՓՄՁ սուբյեկտների կողմից նոր սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաների ձեռքբերման արժեքի փոխհատուցման ծրագիր՝ հաշվետու ժամանակահատվածում սույն ծրագրի շրջանակներում սուբսիդավորվել է ՓՄՁ սուբյեկտների կողմից ներկայացված 472 հայտ: Սուբսիդավորման ընդհանուր գումարը կազմել է 14,860,000 ՀՀ դրամ:

2017 թվականի ընթացքում ՓՄՁ պետական աջակցության տարեկան ծրագրի շրջանակներում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից տրամադրվել է 11487 աջակցություն շուրջ 4700 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտների (որոնց 3,3 %-ը գործում են Երևան քաղաքում, իսկ 96,7 %-ը՝ ՀՀ մարզերում) հետևյալ ուղղություններով՝

1. «ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ենթակառուցվածքների պահպանում և ամրապնդում»

2. «ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար ուսուցողական աջակցություն (կարողությունների զարգացում) ծրագրային միջոցառման ուղղությամբ հաշվետու ժամանակահատվածում՝ *սկսնակ գործարարներին ձեռներեցությանն աջակցության* մասով աջակցություն է տրամադրվել 464 սկսնակ գործարարի, *ուսուցողական աջակցության* մասով աջակցություն է տրամադրվել 246 ՓՄՁ սուբյեկտների:

3.«ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն» ծրագրային միջոցառման ուղղությամբ հաշվետու ժամանակահատվածում շուրջ 4600 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին անհատական, խմբային հանդիպումների և հեռահաղորդակցության միջոցներով տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն է տրամադրվել 10337 անգամ:

4.«ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն» ծրագրային միջոցառման ուղղությամբ հաշվետու ժամանակահատվածում աջակցություն են ստացել 81 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներ:

5.«Տեղական տնտեսական զարգացում և ոլորտային բիզնեսներին աջակցություն» ծրագրային միջոցառման առնչությամբ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 12 ենթակառուցվածքային ծրագիր, 98 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտների համար կազմակերպվել են նաև տեխնոլոգիական դասընթացներ, դրամաշնորհ են ստացել 11 ձեռնարկատերեր: Մշակվել և տպագրվել են 1 գործարար ուղեցույց, ինչպես նաև 2 օրինակելի գործարար մոդել:

6.«Կանանց ձեռներեցությանն աջակցություն» ծրագրային միջոցառման ուղղությամբ հաշվետու ժամանակահատվածում կայացել է «Լավագույն կին գործարար» ՀՀ վարչապետի 2017 թվականի մրցանակաբաշխության հանդիսավոր արարողությունը: ՀՀ վարչապետը

պատվոգրեր է հանձնել «Լավագույն կին գործարար» մրցանակաբաշխության 6 անվանակարգերով հաղթած 12 կին-գործարարների:

7.«Տեղական արտադրանքի արտահանմանն աջակցություն և ՓՄՁ-ի սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովում» ծրագրային միջոցառման ուղղությամբ հաշվետու ժամանակահատվածում «Հայաստանում ձեռնարկությունների եվրոպական ցանցի հաղորդակցման կենտրոնի գործունեության ապահովում» ծրագրային միջոցառման ուղղությամբ Հայաստանում ձեռնարկությունների եվրոպական ցանցի (ՁԵՑ) գործունեության շրջանակներում բիզնեսի միջազգայնացմանն ուղղված 540 տարաբնույթ ծառայություններ են մատուցվել 348 ՓՄՁ սուբյեկտների:

8.«Միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ ՓՄՁ ոլորտի զարգացման համատեղ (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրերի մշակում և իրականացում» ծրագրով նախատեսված ծրագրային ուղղությունների ընդլայնման և լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների ներգրավման նպատակով հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը շարունակել է համատեղ ծրագրեր մշակել և իրականացնել մի շարք միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների հետ: Մասնավորապես՝ ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» ծրագիր, ԵՄ համաֆինանսավորմամբ իրականացվող «Տարածաշրջանային ՓՄՁ-ների մրցունակության խթանումը» ծրագիր, «Ձեռնարկատիրական աշխատանք Հայաստանի երիտասարդության համար» ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO)/Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի համատեղ ծրագիր, «Տեղական արտադրանքի զարգացում և տեղական ապրանքանիշերի առաջմղում Հայաստանում – փուլ - 2» Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ/ՃՄՀԳ (Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալություն) համատեղ ծրագիր, «ERASMUS երիտասարդ ձեռնարկատերերի համար» ծրագիր, Նիդերլանդների ավագ փորձագետների (PUM) կազմակերպության հետ համատեղ ծրագիր:

9. Աջակցության այլ ծրագրեր

Գյուղատնտեսական տեխնիկայի և հարակից սարքավորումների ձեռքբերմանն աջակցության ծրագրի մասով հաշվետու ժամանակահատվածում 2013-2015 թվականների ընթացքում ներկրված գյուղատնտեսական տեխնիկայի մնացորդից վաճառվել է 1 հացահատիկահավաք կոմբայն, 1 հատ ճշգրիտ ցանքի սերմնացան, 2 հատ կուլտիվատոր, 1 հատ կարտոֆիլի շարքացան:

«ՓՄՁ սուբյեկտների կողմից նոր սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաների ձեռքբերման արժեքի փոխհատուցում» ծրագրի շրջանակներում սուբսիդավորվել է ՓՄՁ սուբյեկտների կողմից ներկայացված 126 հայտ: Սուբսիդավորման ընդհանուր գումարը կազմել է 3,920,000 ՀՀ դրամ:

2018 թվականի ընթացքում ՓՄՁ պետական աջակցության տարեկան ծրագրի շրջանակներում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից տրամադրվել է 8979 աջակցություն շուրջ 4000 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտների (որոնց 3,9 %-ը գործում են Երևան քաղաքում, իսկ 96,1 %-ը՝ ՀՀ մարզերում) հետևյալ ուղղություններով՝

1.ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ենթակառուցվածքների պահպանում և ամրապնդում

2.ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար ուսուցողական աջակցություն (կարողությունների զարգացում) ծրագրային միջոցառման ուղղությամբ՝ *սկսնակ գործարարներին ձեռներեցությանն աջակցության* մասով աջակցություն է տրամադրվել 313 սկսնակ գործարարի, *ուսուցողական աջակցության* մասով՝ 314 ՓՄՁ սուբյեկտների:

3.ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն ծրագրային միջոցառման ուղղությամբ հաշվետու ժամանակահատվածում շուրջ 3800 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին աջակցություն է տրամադրվել 8010 անգամ:

4.ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն ծրագրային միջոցառման ուղղությամբ աջակցություն է տրամադրվել 64 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտների:

5.Տեղական տնտեսական զարգացում և ոլորտային բիզնեսներին աջակցություն ծրագրային միջոցառման առնչությամբ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել և իրականացման փուլում է 6 ենթակառուցվածքային ծրագիր, 71 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտների համար կազմակերպվել են տեխնոլոգիական դասընթացներ, դրամաշնորհ են ստացել 49 ձեռնարկատերեր:

6.Տեղական արտադրանքի արտահանմանն աջակցություն և ՓՄՁ-ի սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովում» ծրագրային միջոցառման ուղղությամբ հաշվետու ժամանակահատվածում «Հայաստանում ձեռնարկությունների եվրոպական ցանցի հաղորդակցման կենտրոնի գործունեության ապահովում» ծրագրային միջոցառման ուղղությամբ Հայաստանում ձեռնարկությունների եվրոպական ցանցի (ՁԵՑ) գործունեության շրջանակներում բիզնեսի միջազգայնացմանն ուղղված 408 տարաբնույթ ծառայություններ են մատուցվել 229 ՓՄՁ սուբյեկտների:

7.Միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ ՓՄՁ ոլորտի զարգացման համատեղ (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրերի մշակում և իրականացում ծրագրով նախատեսված ծրագրային ուղղությունների ընդլայնման և լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների ներգրավման նպատակով հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը շարունակել է համատեղ ծրագրեր մշակել և իրականացնել մի շարք միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների հետ: Մասնավորապես՝ ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» ծրագիր, ԵՄ համաֆինանսավորմամբ իրականացվող «Տարածաշրջանային ՓՄՁ-ների մրցունակության խթանումը» ծրագիր, «Տեղական արտադրանքի զարգացում և տեղական ապրանքանիշերի առաջմղում Հայաստանում – փուլ - 2» Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ/ՃՄՀԳ (Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալություն) համատեղ ծրագիր, «ERASMUS երիտասարդ ձեռնարկատերերի համար» ծրագիր:

2019 թվականի ընթացքում նախատեսվում է՝

1. «ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար ուսուցողական աջակցություն (կարողությունների զարգացում) ծրագրային միջոցառման ուղղությամբ հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում և Երևան քաղաքում գործարար ուսուցողական դասընթացներին կմասնակցեն 150 - 200 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներ:

2.«ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն» ծրագրային միջոցառման ուղղությամբ հաշվետու ժամանակահատվածում գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցության շրջանակներում սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտի կտրամադրվի 7000 - 8000 բանավոր խորհրդատվություն:

3.«ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն» ծրագրային միջոցառման ուղղությամբ հաշվետու ժամանակահատվածում գործող ՓՄՁ-ի սուբյեկտներին և սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցության (վարկային երաշխավորությունների տրամադրման) և գործարար նախաձեռնություններին աջակցության շրջանակներում ֆինանսական աջակցություն կցուցաբերվի 25-30 գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտի:

4.«Տեղական տնտեսական զարգացում և ոլորտային բիզնեսներին աջակցություն» ծրագրային միջոցառման առնչությամբ հաշվետու ժամանակահատվածում կիրականացվեն՝

- Տարածաշրջանային և համայնքային տնտեսական զարգացման ծրագրեր,
- օրինակելի գործարար մոդելների ստեղծում և ներդրում,
- տեխնոլոգիական ձեռնարկ-ուղեցույցերի հրատարակում,
- տեխնոլոգիական դրամաշնորհների տրամադրում:

5.«Տեղական արտադրանքի արտահանմանն աջակցություն և ՓՄՁ-ի սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովում» ծրագրային միջոցառման ուղղությամբ հաշվետու ժամանակահատվածում համագործակցելով տեղական և միջազգային կազմակերպությունների հետ՝ կտեղայնացվի տվյալ ուղղությամբ գոյություն ունեցող լավագույն միջազգային փորձը: Արդյունավետ գործիքներ կկիրառվեն արտահանող կամ արտահանման ներուժ ունեցող ՓՄՁ սուբյեկտներին համակողմանի տեխնիկական, տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն ցուցաբերելու նպատակով:

6.«Միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ ՓՄՁ ոլորտի զարգացման համատեղ (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրերի մշակում և իրականացում» 2019 թվականի ընթացքում աշխատանքներ կիրականացվեն Հայաստանում ՓՄՁ-ի զարգացմանն ուղղված համապատասխան ծրագրեր իրականացնող միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների (ծրագրերի) հետ համագործակցության ընդլայնման, ինչպես նաև նոր ծրագրային առաջարկների մշակման և իրականացման ուղղությամբ:

2. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

ՄԺԾԾ ժամանակահատվածում ՓՄՁ ոլորտի զարգացման և պետական աջակցության նպատակներն են՝

1) պետական ուղղակի աջակցության գործիքների միջոցով երկրում ՓՄՁ զարգացման խթանումը.

2) ՓՄՁ զարգացման ճանապարհով երկրի, հատկապես նրա հեռավոր և սահմանամերձ բնակավայրերի տնտեսական զարգացմանը և անհամամասնությունների հաղթահարմանը նպաստելը.

3) ՓՄՁ զարգացման միջոցով երկրի տնտեսության բազմազանեցմանը նպաստելը և զբաղվածության ու ինքնազբաղվածության մակարդակի բարձրացման ապահովումը.

4) ՓՄՁ սուբյեկտների պետական աջակցությանը նպատակաուղղված շրջանակների բազմազանեցումը, ինչպես նաև ՓՄՁ սուբյեկտներին ցուցաբերվելիք պետական աջակցության նպատակայնության ու հասցեականության ապահովումը:

ՓՄՁ ոլորտի նպատակների ապահովման ուղղությամբ նախատեսվում է՝

1) գործարար միջավայրի բարելավմանը զուգընթաց գործող և սկսնակ ՓՄՁ սուբյեկտների ձեռներեցությամբ զբաղվելու, ինչպես նաև նրանց ֆինանսական և ներդրումային հնարավորությունների ընդլայնում՝ նախապատվություն տալով Հայաստանի Հանրապետության մարզերին՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման առանձնահատկությունները.

2) կանանց ձեռներեցությամբ զբաղվելու հնարավորությունների ընդլայնում.

3) ՓՄՁ սուբյեկտներին պետական աջակցության առկա գործիքների (ֆինանսական, տեղեկատվական, խորհրդատվական, ուսուցողական և այլն) կիրառման շարունակականության և արդիականացման ապահովում.

4) ՓՄՁ սուբյեկտների գործունեության միջազգայնացում, մասնավորապես, ՓՄՁ սուբյեկտներին աջակցություն՝ գործող միջազգային կառույցներին և ցանցերին ինտեգրում.

5) ՓՄՁ սուբյեկտների նորարարական նախաձեռնությունների խթանում, մասնավորապես, արտահանմանն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության արդյունաբերական քաղաքականության ռազմավարության ներքո իրականացվող միջոցառումների շրջանակներում նորարարությունների ներդրման նպատակով դրամաշնորհների տրամադրում.

6) հեռանկարային և արտահանման ներուժ ունեցող ՓՄՁ սուբյեկտներին աջակցության ցուցաբերում.

7) գիտատար արտադրության իրականացման հնարավորությունների բացահայտում և այդ ուղղությամբ գործող ՓՄՁ սուբյեկտների կարողությունների առաջնահերթ զարգացում.

8) ՓՄՁ տարեկան ծրագրերի իրականացման շրջանակներում ավելի շատ ՓՄՁ սուբյեկտների ներգրավում և նրանց ցուցաբերվող պետական աջակցության շրջանակների ընդլայնում.

9) ՓՄՁ սուբյեկտներին աջակցող ենթակառուցվածքների հզորացմանն ուղղված միջոցառումների իրականացում:

Վերոհիշյալ նպատակները համահունչ և փոխկապակցված են ՀՀ կառավարության գործունեության ծրագրային միջոցառումների ցանկում ընդգրկված «ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում և կառավարում» տարեկան ծրագրի նպատակային ուղղությունների հետ, որոնք բխում են ՀՀ կառավարության գործունեության ընդհանուր նպատակներից և կրում են շարունակական ու կայուն բնույթ առնվազն միջնաժամկետ հատվածում:

Ընդ որում, վերոհիշյալ նպատակների իրագործումը նպատակաուղղված է ՓՄՁ տարեկան ծրագրերով նախատեսված միջոցառումների իրականացման (ծառայությունների մատուցման) շրջանակներում ավելի շատ ՓՄՁ սուբյեկտների (շահառուների) ներգրավմանը և նրանց ցուցաբերվող պետական աջակցության շրջանակների ընդլայնմանը:

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները					Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ
		Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը		
			Ցուցա-նիշը	Ժամ-կետը	Ցուցա-նիշը	Ժամ-կետը	
ՓՄՁ զար-գացում և ընդլայնում	*1104 Աջակցություն փոքր և միջին ձեռնարկա-տիրությանը*	*ՓՄՁ հատվածի կշիռը ՀՆԱ-ում, %*	*24.6*	*2017թ*	*27.0*	*2020թ*	*ՀՀ կառավարության 2019-2023 թթ գործունեության ծրագրի կատարումն ապա-հովող միջոցառումների ցանկում ընդգրկված ՓՄՁ ոլորտի զարգացման ռազմավարության իրակա-նացմամբ ապահովվող ուղենիշային ցուցանիշ*

3. ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

2020-2022թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում ՓՄՁ ոլորտում իրականացվելիք (գոյություն ունեցող) ծախսային ծրագրերը (պարտավորությունները)՝ տվյալ դեպքում «ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում և կառավարում» տարեկան (2020 թվականի, 2021 թվականի և 2022 թվականի) ծրագրերը մշակում և իրականացնում է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը՝ որպես ՓՄՁ պետական քաղաքականության և ռազմավարության ու ՓՄՁ ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրերի, այդ թվում՝ «ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում և կառավարում» տարեկան ծրագրերի մշակման և իրականացման համար պատասխանատու կառույց:

2020-2022 թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում ՓՄՁ ոլորտում իրականացվելիք (գոյություն ունեցող) ծախսային ծրագրերի (պարտավորությունների) իրականացումը մեծապես կնպաստի ՓՄՁ ոլորտի գերակայությունների և ՓՄՁ ոլորտի զարգացման ու պետական աջակցության ծրագրային նպատակների և գերակայությունների իրականացմանը:

Գերակա ծախսային ուղղությունները ՄԺԾԾ ժամանակահատվածի համար՝ (ըստ գերակայությունների նվազման)	Հիմնավորումներ
«ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում և կառավարում» տարեկան ծրագրի մշակում և իրականացում	2000 թվականի «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրեն-քի 4-րդ հոդված

4. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Կից ներկայացվում է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահի կողմից հաստատված հիմնական աշխատակիցների հաստիքացուցակը:

4.1. Պարտադիր և հայեցողական ծախսերը

1) ***<u>Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ:</u>*** ՓՄՁ-ի աջակցության պետական ծրագրի իրականացման ֆինանսավորումն իրականացվում է 2000 թվականի «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն:

4.2. Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունները

ՀՀ 2019-2021 թթ. պետական ՄԺԾԾ-ով և «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատված ծախսային պարտավորություններ հանդիսացող ՓՄՁ ոլորտում իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները) նպաստում են ՓՄՁ ոլորտի ընդհանուր նպատակների և գերակայությունների իրականացմանը: Մասնավորապես որպես գոյություն ունեցող ծախսային ծրագրեր (պարտավորություններ) հանդիսացող «ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում և կառավարում» տարեկան ծրագրերի շրջանակներում նախատեսված ծրագրային ուղղությունները (միջոցառումները) նպատակաուղղված են ՀՀ մարզերում նոր ՓՄՁ սուբյեկտների և նոր աշխատատեղերի ստեղծմանը, գործող ՓՄՁ սուբյեկտների մրցունակության բարձրացմանը, ցածր տնտեսական ակտիվությամբ առանձնացող տարածաշրջաններում ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը, երկրի ՀՆԱ-ում, ինչպես նաև այլ մակրոտնտեսական ցուցանիշներում ՓՄՁ սուբյեկտների տեսակարար կշռի հետագա ավելացմանը: Բացի այդ, ծախսային ծրագրերի (պարտավորությունների) շրջանակներում Հայաստանում ՁԵՑ-ի հաղորդակցման կենտրոնի միջոցով իրականացվելիք աշխատանքներն ուղղված են հեռանկարային և արտահանման ներուժ ունեցող ՓՄՁ սուբյեկտների գործունեության միջազգայնացմանը, արտերկրներում գործընկերների հայտնաբերմանը և գործարար կապերի հաստատմանը:

2020-2022թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում «ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում և կառավարում» տարեկան (2020 թվականի, 2021 թվականի և 2022 թվականի) ծրագրերի իրականացման համար կանխատեսվում է բավարար ֆինանսական միջոցների հատկացում, որը ՄԺԾԾ ժամանակահատվածում կնպատակաուղղվի ՓՄՁ ոլորտի

պետական աջակցության (ըստ համապատասխան տարիների ծրագրային միջոցառումների) շրջանակների ընդլայնմանը և բազմազանեցմանն, ինչպես նաև ՄԺԾԾ ժամանակահատվածում գործող և սկսնակ ՓՄՁ սուբյեկտներին ցուցաբերվելիք պետական աջակցության ծավալների ընդլայնմանը և դրա նպատակայնության ու հասցեականության ապահովմանը:

ՓՄՁ ոլորտում իրականացվելիք ծախսային ծրագրերի/պարտավորությունների (տվյալ դեպքում «ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում և կառավարում» տարեկան (2020 թվականի, 2021 թվականի և 2022 թվականի) ծրագրերի գծով ծախսերի մակարդակի վրա ազդող գործոնները պայմանավորված են ինչպես ՓՄՁ պետական քաղաքականության արդյունավետ իրականացմամբ (ՓՄՁ սուբյեկտների թվաքանակի ավելացում՝ դրա հաշվին նոր աշխատատեղերի ստեղծում և հասարակության միջին խավի ձևավորում), այնպես էլ ՓՄՁ պետական քաղաքականության իրականացման հետ անմիջական առնչություն չունեցող գործոնների առկայությամբ (բնակչության տեղաշարժեր, բնակչության սոցիալական կառուցվածքի փոփոխություն և այլն):

ՓՄՁ ոլորտի հետագա զարգացման, մասնավորապես ՓՄՁ ոլորտում իրականացվելիք ծախսային ծրագրերի (պարտավորությունների) գծով ծախսային գործոնների ազդեցության մեղմման նպատակով անհրաժեշտ է տարեցտարի ընդլայնել ՓՄՁ ոլորտին ուղղված պետական աջակցության շրջանակները:

4.3. Նոր նախաձեռնությունները

2020-2022 թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում ՓՄՁ ոլորտի զարգացման ու պետական աջակցության ծրագրերի շրջանակներում «ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում և կառավարում» տարեկան (2020 թվականի, 2021 թվականի և 2022 թվականի) ծրագրերից բացի այլ ծրագրեր, որպես նոր նախաձեռնություններ, չի նախատեսվում իրականացնել, հետևաբար 2020-2022թթ. ՄԺԾԾ հայտի առնչությամբ չի ներկայացվում համապատասխան տեղեկատվություն և չի լրացվում 2020-2022թթ. ՄԺԾԾ հայտի մեթոդական ցուցումների ՄԱՍ 3-ի N3 հավելվածում ներկայացված աղյուսակը:

5. ՈՉ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

ՓՄՁ ոլորտում գործող պետական հատվածի տնտեսավարող սուբյեկտների կողմից 2020-2022թթ. իրականացվելիք ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ստացվող եկամուտների աղբյուրների (բացառությամբ պետական բյուջեից ստացվող եկամուտների) վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն չի ներկայացվում՝ պայմանավորված հավաստի տեղեկատվության բացակայությամբ, հետևաբար չի լրացվում 2020-2022թթ. ՄԺԾԾ հայտի մեթոդական ցուցումների ՄԱՍ 3-ի հավելված N7-ում ներկայացված աղյուսակը:

6. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

2020-2022թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում ՓՄՁ ոլորտի զարգացման ու պետական աջակցության ծրագրերի շրջանակներում «ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում և կառավարում» տարեկան (2020 թվականի, 2021 թվականի և 2022 թվականի) ծրագրերը, ինքնին չհանդիսանալով որպես զուտ տարածքային զարգացման ծրագրեր, հիմնվելով ՀՀ կառավարության որդեգրած տնտեսական քաղաքականության հիմնարար սկզբունքների վրա նպաստում են երկրի, հատկապես նրա հեռավոր և սահմանամերձ բնակավայրերի տնտեսական զարգացմանը և անհամամասնությունների հաղթահարմանը և համահունչ են ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով հաստատված ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագրերում ամրագրված ՀՀ տարածքային զարգացման ընդհանուր նպատակների և գերակայությունների իրագործմանը:

Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում գործում են Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի մասնաճյուղերը:

7. ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ՝ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԽՈՂՈՎԱԿՆԵՐՈՎ ՍՏԱՑՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԸ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

2020-2022թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում արտաքին աղբյուրներից՝ պետական բյուջեի խողովակներով ստացվող վարկերի և դրամաշնորհների հաշվին ՓՄՁ ոլորտի զարգացման ու պետական աջակցության ծրագրերի («ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում և կառավարում» 2020 թվականի, 2021 թվականի և 2022 թվականի ծրագրերի) իրականացում չի նախատեսվում, հետևաբար սույն ՄԺԾԾ հայտի առնչությամբ չի ներկայացվում համապատասխան տեղեկատվություն և չի լրացվում 2020-2022թթ. ՄԺԾԾ հայտի մեթոդական ցուցումների ՄԱՍ 3-ի N9 հավելվածում ներկայացված աղյուսակային ձևերը:

8. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

2020-2022թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածի համար ՓՄՁ ոլորտի գծով ֆինանսական պահանջների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է 2020-2022 թթ. ՄԺԾԾ հայտի մեթոդական ցուցումների ՄԱՍ 3-ի N10 հավելվածում ներկայացված աղյուսակների ձևաչափերին համապատասխան:

9. ՀԱՅՏԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

Ենթադրվում է, որ 2020-2022թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում ՓՄՁ ոլորտի զարգացման ու պետական աջակցության ծրագրերի («ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության

ծրագրերի համակարգում և կառավարում» 2020 թվականի, 2021 թվականի և 2022 թվականի ծրագրերի) իրականացումը կուղեկցվի որոշ ռիսկային գործոններով, մասնավորապես համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական ազդեցությամբ պայմանավորված Հայաստանի գործարար միջավայրի անկայունությամբ, ՀՀ կառավարության կողմից իրականացվող տնտեսական և դրամավարկային քաղաքականության նկատմամբ գործարարների անվստահության ձևավորմամբ, ինչպես նաև այլ անկանխատեսելի ռիսկային գործոններով: Այս հանգամանքն իր բացասական ազդեցությունը կթողնի 2020-2022թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում ՓՄՁ ոլորտի զարգացման ու պետական աջակցության ծրագրային նպատակների և արդյունքային ցուցանիշների վրա:

Ռիսկերի վերլուծության վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունն ամփոփ ներկայացվում է հետևյալ աղյուսակում.

Ռիսկի նկարագրությունը	*Երևույթի հանդես գալու հավանականությունը*	*Հնարավոր ազդեցությունը նպատակների և արդյունքային ցուցանիշների վրա*	*Ռիսկի կանխման/ հաղթահարման հնարավոր ուղիները*
Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամ	*1*	*Բացասական ազդեցություն նպատակների և արդյունքային ցուցանիշների վրա*	*ՀՀ կառավարության կողմից նպատակաուղղված պետական քաղաքականության իրականացում*
Հայաստանի գործարար միջավայրի անկայունություն	*5*	*Բացասական ազդեցություն նպատակների և արդյունքային ցուցանիշների վրա*	*ՀՀ կառավարության կողմից նպատակաուղղված պետական քաղաքականության իրականացում*
ՀՀ կառավարության կողմից իրականացվող տնտեսական և դրամավարկային քաղաքականության նկատմամբ գործարարների անվստահության ձևավորում	*5*	*Բացասական ազդեցություն նպատակների և արդյունքային ցուցանիշների վրա*	*ՀՀ կառավարության կողմից նպատակաուղղված տնտեսական և դրամավարկային քաղաքականության իրականացում*

ՄԱՍ 3. ՄԺԾԾ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՅՏԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված N 1. Գոյություն ունեցող պարտավորությունների գծով ծախսակազմումների ամփոփ ձևաչափ[1]

Ծրագիրը՝ [2]	1104, Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրությանը
Միջոցառումը՝ [3]	11001, «ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում և կառավարում»
Միջոցառման հիմքում դրված ծախսային պարտավորության բնույթը՝ [4]	«Պարտադիր ծախսերին դասվող միջոցառում»

Աղյուսակ 2. Ծախսերի ամփոփ հաշվարկը (առանց ծախսային խնայողությունների գծով առաջարկների ներառման)[11]

Ծախսային տարրերը[12]	<Լրացնել ծախսային գործոնի կամ սպառվող ռեսուրսի անվանումը և չափման միավորը> [13]					<Լրացնել ծախսային գործոնի կամ սպառվող ռեսուրսի անվանումը և չափման միավորը>[13]					…	Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)[14]				
	2018թ. փաստ.	2019թ. բյուջե	2020թ.	2021թ.	2022թ.	2018թ. փաստ.	2019թ. բյուջե	2020թ.	2021թ.	2022թ.	…	2018թ. փաստ.	2019թ. բյուջե	2020թ.	2021թ.	2022թ.
Ընդամենը փոփոխության ենթարկված ծախսեր (հազ. դրամ)[15], այդ թվում ըստ առանձին ծախսային տարրերի՝	X	X	X	X	X	X	X	X	X	X	…					
«ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում և կառավարում» տարեկան ծրագիրն իրականացնող Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի անձնակազմի և փորձագետների վարձատրությանն ուղղված միջոցներ												152.600,0	183.120,0	183.120,0	183.120,0	183.120,0
<Լրացնել ծախսային տարրի անվանումը>																
…																
Ընդամենը փոփոխության չենթարկված ծախսեր (հազ. դրամ)[16]	X	X	X	X	X	X	X	X	X	X	…					
ԸՆԴԱՄԵՆԸ (հազ. դրամ)[17]	X	X	X	X	X	X	X	X	X	X	…					

Հավելված N 3. Բյուջետային ծրագրերի և ակնկալվող արդյունքների ներկայացման ձևաչափ

ՄԱՍ 2. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Դասիչ	Ծրագիր/Միջոցառում	2018թ. Փաստացի (հազ. դրամ)	2019թ սպասվող (հազ. դրամ)	2020թ (հազ. դրամ)	2021թ (հազ. դրամ)	2022թ (հազ. դրամ)
Ծրագիր						
1104	«Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրությանը» / «ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում և կառավարում»	152.600,0	183.120,0	183.120,0	183.120,0	183.120,0

ՄԱՍ 3 ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԳԾՈՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները					Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ
		Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը		
			Ցուցանիշը	Ժամկետը	Ցուցանիշը	Ժամկետը	
ՓՄՁ զար-գացում և ընդլայնում	*1104* «Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրությանը»						
		ՓՄՁ հատվածի կշիռը ՀՆԱ-ում, %	*24.6*	*2017թ*	*27.0*	*2020թ*	*ՀՀ կառավարության 2019-2023 թթ գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկում ընդգրկված ՓՄՁ ոլորտի զարգացման ռազմավարության իրականացմամբ ապահովվող ուղենիշային ցուցանիշ*

ՄԱՍ 4. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳԾՈՎ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ (ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Ծրագրի դասիչը	Ծրագրի անվանումը
1104	«Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրությանը»

Ծրագրի միջոցառումները

Ծրագրի դասիչը՝	1104	Ցուցանիշներ					
Միջոցառման դասիչը՝	11001	2018թ փաստացի	2019թ սպասվող	2020թ	2021թ	2022թ	*<Լրացնել միջոցառման ավարտի տարեթիվը>*
Միջոցառման անվանումը՝	ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում և կառավարում						
Նկարագրությունը՝	ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում, կառավարում և ընդլայնում, ՓՄՁ-ի սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցության, տեղական տնտեսական զարգացման, տեղական արտադրանքի արտահանմանն աջակցության և ՓՄՁ-ի սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովման ու ոլորտային բիզնեսներին աջակցության ուղղություն-ներով, ինչպես նաև գործարար ուսուցողական, տեղեկատվական և խորհրդատվական աջակցության ցուցաբերում Երևանում և ՀՀ մարզերում գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտներին, որից շուրջ 90%-ը ՀՀ մարզերում						
Միջոցառման տեսակը՝	Ծառայությունների մատուցում						
Միջոցառումն իրականացնողի անվանում՝	Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամ						
Արդյունքի չափորոշիչներ							
<Լրացնել արդյունքի չափորոշիչի տեսակը>	*<Լրացնել արդյունքի չափորոշիչի անվանումը և չափման միավորը>*						
Քանակական	1. Գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար ուսուցողական աջակցություն	627	*150-200*	*150-200*	*150-200*	*150-200*	
	2. Գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտներին տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն	8010	*7000-8000*	*7000-8000*	*7000-8000*	*7000-8000*	
	3. Գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն	64	*25-30*	*25-30*	*25-30*	*25-30*	

Որակական	1.Ուսուցողական աջակցություն ստացած գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտների ուսուցման արդյունավետու-թյան գնահատում (բալային գնահատական՝ 1-5)	3 բալից ավել	3 բալից ավել	3 բալից ավել	3 բալից ավել	3 բալից ավել	
	2.Ֆինանսական և ներդրումային աջակցության համար դիմած գործող և սկսնակ ՓՄՁ սուբյեկտների ներկայացրած հայտերի բավարարման չափը	շուրջ 50 %	շուրջ 50 %	շուրջ 50 %	շուրջ 50 %	շուրջ 50 %	
Ժամկետայնության	1.Գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար տեղեկատվական, խորհրդատվական, ուսուցողական, ֆինանսական (ներդրումային) և այլ աջակցության ցուցաբերման պարբերականությունը	Տարեկան կտրվածքով	Տարեկան կտրվածքով	Տարեկան կտրվածքով	Տարեկան կտրվածքով	Տարեկան կտրվածքով	
	2.Յուրաքանչյուր դասընթացի տևողությունը	30-35 օր	30-35 օր	30-35 օր	30-35 օր	30-35 օր	
Միջոցառման վրա կատարվող ծախսը (հազար դրամ)		x	x	x	x	x	Շարունակա-կան

Հավելված N 4. Բյուջետային ծրագրերի գծով ամփոփ ծախսերն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների

Ծրագրային դասիչը		Ծրագիր /Միջոցառում	2018թ փաստ. (հազ. դրամ)				2019թ սպասվող (հազ. դրամ)				2020թ բյուջե (հազ. դրամ				2021թ բյուջե (հազ. դրամ)				2022 թ բյուջե (հազ. դրամ)			
			Ընդամենը	<Հոդվածի անվանումը և կոդը>	<Հոդվածի տեսակը>	...	Ընդամենը	<Հոդվածի անվանումը և կոդը>	<Հոդվածի տեսակը>	...	Ընդամենը	<Հոդվածի անվանումը և կոդը>	<Հոդվածի տեսակը>	...	Ընդամենը	<Հոդվածի անվանումը և կոդը>	<Հոդվածի տեսակը>	...	Ընդամենը	<Հոդվածի անվանումը և կոդը>	<Հոդվածի տեսակը>	...
1104		«Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրությանը»																				
	11001	ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում և կառավարում	152.600,0				183.120,0				183.120,0				183.120,0				183.120,0			
	……	…….																				

Հավելված N 5. Բյուջետային ծրագրերի գծով ծախսերի բաշխումն ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման տարրերի

Ծրագրային դասիչը		Ծրագիր /Միջոցառում	Գործառական դասակարգման			2018թ փաստ. (հազ. դրամ)	2019թ սպասվող (հազ. դրամ)	2020թ բյուջե (հազ. դրամ)	2021թ բյուջե (հազ. դրամ)	2022 թ բյուջե (հազ. դրամ)
			Բաժին	Խումբ	Դաս					
1104		«Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրությանը»	X	X	X					
	11001	ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում և կառավարում				152.600,0	183.120,0	183.120,0	183.120,0	183.120,0
	ԱԾ 01	«ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար ուսուցողական աջակցություն (կարողու-թյունների զարգացում)				-	-	-	-	-
	ԱԾ 02	«ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն»				-	-	-	-	-
	ԱԾ 03	«ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական և ներդրու-մային աջակցություն»				-	-	-	-	-
	ԱԾ 04	«Տեղական տնտեսական զարգացում և ոլորտային բիզնեսներին աջակցություն»				-	-	-	-	-
	ԱԾ 05	«Տեղական արտադրանքի արտահանմանն աջակցու-թյուն և ՓՄՁ-ի սուբյեկտների միջազգային համագործակ-ցության ընդլայնման ապա-հովում»				-	-	-	-	-
	ԱԾ 06	«Միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ ՓՄՁ ոլորտի զարգացման համատեղ (համաֆինան-սավորման սկզբունքով) ծրագրերի մշակում և իրականացում»				-	-	-	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ						**152.600,0**	**183.120,0**	**183.120,0**	**183.120,0**	**183.120,0**

Հավելված N 10. Ամփոփ ֆինանսական պահանջներ ՄԺԾԾ ժամանակահատվածի համար

Աղյուսակ 1. Ծրագրերի և միջոցառումների գծով ամփոփ ֆինանսական պահանջներ 2020-2022 թթ համար

(հազ. դրամ)

Ծրագրային դասիչը		Ծրագրի/միջոցառման անվանումը	Գոյություն ունեցող պարտավորությունների գծով հաշվարկված (ճշգրտված) ծախսերը (հազ. դրամ)			Ծախսային խնայողության գծով ամփոփ առաջարկը (հազ. դրամ) (-)			Նոր նախաձեռնություններ (հազ. դրամ) (+)			Միջոցառման գծով ամփոփ ծախսերը (հազ. դրամ)		
Ծրագիր	Միջոցառում		2020թ	2021թ	2022թ	2020թ	2021թ	2022թ	2020թ	2021թ	2022թ	2020թ	2021թ	2022թ
Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ														
1104		**«Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրությանը»**												
	11001	**ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում և կառավարում**										**183.120,0**	**183.120,0**	**183.120,0**
		<Միջոցառման անվանումը>												
Հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ (շարունակական բնույթի)														
		<Ծրագրի անվանումը>												
		<Միջոցառման անվանումը>												
		<Միջոցառման անվանումը>												
Հայեցողական ծախսերին դասվող այլ միջոցառումներ														
		<Ծրագրի անվանումը>												
		<Միջոցառման անվանումը>												
		<Միջոցառման անվանումը>												

Աղյուսակ 2. Հայտով ներկայացված՝ 2020-2022թթ ընդհանուր ծախսերի համեմատությունը ՀՀ 2019թ. պետական բյուջեի և 2019-2021թթ. ՄԺԾԾ հետ

(հազար դրամներով)

	2019թ.	2020թ.	2021թ.	2022թ.
1. Պետական մարմնի գծով 2019-2020 ՄԺԾԾ-ով հաստատված և 2022թ. համար սահմանված ֆինանսավորման ընդհանուր կողմնորոշիչ չափաքանակները	X	**183.120,0**	**183.120,0**	**183.120,0**
2. <<ՀՀ 2019թ. պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքով պետական մարմնի գծով սահմանված ընդհանուր հատկացումները	**183.120,0**	X	X	X
3. Ընդամենը հայտով ներկայացված ընդհանուր ծախսերը՝ 2020-2022 թթ. ՄԺԾԾ համար (տող 3.1 + տող 3.2 + տող 3.3.)	X	**183.120,0**	**183.120,0**	**183.120,0**
3.1 Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունների գնահատում 2020-2022 թթ. ՄԺԾԾ համար (առանց ծախսային խնայողությունների վերաբերյալ առաջարկների ներառման)	X	**183.120,0**	**183.120,0**	**183.120,0**
3.2 Ծախսային խնայողությունների գծով առաջարկները (-) նշանով	X	-	-	-
3.3 Նոր նախաձեռնությունների գծով ընդհանուր ծախսերը	X	-	-	-
4. Տարբերությունը ՀՀ 2019թ. պետական բյուջեի համապատասխան ցուցանիշից (տող 3 - տող 2)	X	0	0	0
5. Տարբերությունը 2019-2020 ՄԺԾԾ-ով հաստատված և 2022թ. համար սահմանված ֆինանսավորման կողմնորոշիչ չափաքանակներից (տող 3-տող 1)	X	0	0	0

Հավելված N 12

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ

Փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) ոլորտը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման գերակա ուղղություններից մեկը:

Կարևորելով ՓՄՁ-ի դերը նոր աշխատատեղերի ստեղծման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, հասարակության միջին խավի ձևավորման, երկրում սոցիալական և քաղաքական կայունության ապահովման գործում Հայաստանի Հանրապետության կառավարությունը շարունակական քայլեր է ձեռնարկում՝ ուղղված ՓՄՁ զարգացմանը:

ՓՄՁ զարգացման պետական քաղաքականությունը հիմնականում ընդգրկում է երկու ուղղություն՝ ՓՄՁ սուբյեկտների գործունեության համար բարենպաստ գործարար միջավայրի ձևավորում, ինչպես նաև ՓՄՁ կարողությունների զարգացման և հզորացման համար ուղղակի պետական աջակցության տրամադրում:

Այս համատեքստում հետևողական աշխատանքներ են իրականացվում Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկատիրական գործունեության օրենսդրական կարգավորման, ՓՄՁ-ի զարգացման քաղաքականության ու ռազմավարության, ՓՄՁ ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրերի մշակման, ինչպես նաև ՓՄՁ ոլորտի պետական աջակցությամբ համապատասխան ծրագրերի իրականացման ուղղությամբ:

Պետական աջակցության տրամադրման շրջանակներում մասնավորապես իրականացվում են ՓՄՁ պետական աջակցության տարեկան ծրագրեր, որով նախատեսված ծրագրային միջոցառումների գերակշիռ մասը նպատակաուղղված է Հայաստանի Հանրապետության մարզերում, առավելապես սահմանամերձ և հեռավոր բնակավայրերում, սկսնակ ու գործող ՓՄՁ սուբյեկտներին աջակցության ցուցաբերմանը, նոր ՓՄՁ սուբյեկտների և նոր աշխատատեղերի ստեղծմանը, գործող ՓՄՁ սուբյեկտների մրցունակության բարձրացմանը և, ընդհանուր առմամբ, ցածր տնտեսական ակտիվությամբ առանձնացող Հայաստանի Հանրապետության մարզերում և տարածաշրջաններում տնտեսական ու գործարար ակտիվության բարձրացմանը:

Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության տարեկան ծրագրերն իրենց մեջ ներառում են ուսուցողական, տեղեկատվական, ֆինանսական, խորհրդատվական և այլ աջակցության գործիքներ:

Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության ծրագրի շրջանակներում ֆինանսական աջակցությունն իրականացվում է «Վարկերի դիմաց երաշխավորությունների տրամադրում», «Սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցություն (վարկային երաշխավորությունների տրամադրում)» և «Գործարար նախաձեռնություններին աջակցություն» նպատակային ծրագրերի միջոցով, ինչպես նաև ներկա փուլում քննարկումներ

են ընթանում մի շարք առևտրային բանկերի հետ գործող ֆինանսական աջակցության գործիքակազմի պայմանների բարելավման և ընդլայնման մեխանիզմների, նոր գործիքների ներդրման հնարավորությունների ուղղությամբ:

ՓՄՁ ոլորտում իրականացվող քաղաքականությունը նպատակադրում է պետական ուղղակի աջակցության մեխանիզմների (գործիքների) միջոցով երկրում ՓՄՁ զարգացման խթանումը, տարածքային համաչափ զարգացման ապահովումը, տնտեսության դիվերսիֆիկացման գործում ՓՄՁ-ների դերի մեծացումը, ՓՄՁ սուբյեկտների պետական աջակցությանը նպատակաուղղված շրջանակների բազմազանեցումը: Այս համատեքստում կարևորվում է ՓՄՁ-ների համար ոչ միայն նպաստավոր գործարար միջավայրի ստեղծումը, այլև ուղղակի աջակցության ընդլայնումը, մասնավորապես՝ ՓՄՁ սուբյեկտներին ցուցաբերվելիք պետական աջակցության նպատակայնության ու հասցեականության ապահովումը:

ՓՄՁ ռազմավարական նպատակների ապահովման ուղղությամբ նախատեսվում է.

- ՓՄՁ սուբյեկտներին պետական աջակցության առկա մեխանիզմների (գործիքների) (ֆինանսական, տեղեկատվական, խորհրդատվական, ուսուցողական, տեղական տնտեսական զարգացման, ոլորտային բիզնեսներին աջակցություն և այլն) կիրառման շարունակականության և արդիականացման ապահովում.

- ՓՄՁ սուբյեկտներին պետական աջակցության նոր մեխանիզմների (գործիքների) ներդրում՝ ի նպաստ մարզային և համայնքային մակարդակում արդյունաբերական կլաստերների ձևավորմանը և տարածքային զարգացմանը,

- «ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում և կառավարում» տարեկան ծրագրերի շրջանակներում ՓՄՁ սուբյեկտների (շահառուների) և ցուցաբերվող պետական աջակցության շրջանակների ընդլայնում,

- կանանց և ընտանեկան ձեռներեցության խրախուսում և աջակցության ցուցաբերում,

- ՓՄՁ սուբյեկտների գործունեության միջազգայնացում, մասնավորապես՝ արտահանման ներուժ ունեցող ՓՄՁ սուբյեկտներին աջակցություն՝ գործող միջազգային կառույցներին և ցանցերին ինտեգրում,

- ՓՄՁ-ների համար ֆինանսական միջոցների հասանելիության բարձրացում,
- ՓՄՁ-ների գործունեության համար օրենսդրական կայուն դաշտի ձևավորում,
- ՓՄՁ սուբյեկտներին աջակցող ենթակառուցվածքների հզորացմանն ուղղված միջոցառումների իրականացում,
- ՓՄՁ ոլորտում իրականացվող քաղաքականության և ոլորտի գործունեության մասին հաղորդակցության մակարդակի բարձրացում:

Նշված նպատակների իրագործումը նախատեսում է երկրի համախառն ներքին արդյունքում, ինչպես նաև այլ մակրոտնտեսական ցուցանիշներում ՓՄՁ-ի սուբյեկտների տեսակարար կշռի հետագա ավելացում, ՓՄՁ-ի սուբյեկտների ֆինանսական և ներդրումային

հնարավորությունների ընդլայնում, ՓՄՁ-ի սուբյեկտներում նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման հնարավորությունների ընդլայնում, ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար ուսուցողական, տեղեկատվական և խորհրդատվական ծառայությունների մատուցման հնարավորությունների ընդլայնում, ՓՄՁ-ի սուբյեկտների գործունեության շրջանակների ընդլայնում և նրանց մրցունակության բարձրացում, նրանց կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) տեսականու ընդլայնում և դրանց բազմազանեցում, նոր ապրանքատեսակների արտադրության և ծառայությունների մատուցման քանակական ու որակական աճ և դրանց արտահանման ծավալների ավելացում, սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության ցուցաբերում, ՓՄՁ-ի սուբյեկտների թվաքանակի ավելացում և դրանց հաշվին նոր աշխատատեղերի ստեղծում, այդ թվում ՀՀ մարզերում, գործարար ակտիվության բարձրացում ՀՀ մարզերում և այդ նպատակով ցուցաբերվող պետական աջակցության շուրջ 90%-ի ուղղորդում այդտեղ գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտներին, որն իր հերթին կնպաստի ցածր տնտեսական ակտիվությամբ առանձնացող տարածաշրջաններում ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը, երկրում գործազրկության կրճատմանը, հասարակության միջին խավի ձևավորմանը և աղքատության հաղթահարմանը:

Ստորև ներկայացվում են «ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում և կառավարում» 2019 թվականի ծրագրի շրջանակներում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կողմից ցուցաբերվելիք աջակցության կանխատեսվող քանակները՝ ըստ ուղղությունների.

1) 150-200 գործող և սկսնակ ՓՄՁ սուբյեկտներին գործարար ուսուցողական աջակցություն,

2) 7000-8000 տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն գործող և սկսնակ ՓՄՁ սուբյեկտներին,

3) 25-30 գործող և սկսնակ ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն: